# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ «ԱԿՕՍ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԷՋԵՐՈՒՄ ՀՐԱՆՏ ԴԻՆՔԻ ԽՄԲԱԳՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1996-2007 ԹԹ.)

***Էլինա Միրզոյան***

Հայոց ցեղասպանության թեման Թուրքիայում երկար տարիներ տաբու էր: Քննվող թեմայի շուրջ առաջին քիչ թե շատ լայն անդրադարձը սկսում է նկատվել միայն 1965 թ., երբ ՀԽՍՀ-ում և Սփյուռքում ցեղասպանության 50-ամյակի միջոցառումների մասին լուրերը և քննադատությունները տեղ են գտնում թուրքական մամուլում[1]: Այս ընթացքում ձևավորվում էին ստի և կեղծիքի վրա հիմնված թուրքական պաշտոնական թեզերը, և իրար հաջորդող իշխանությունները որդեգրում ու հետևում էին դրանց, միևնույն ժամանակ Հայոց ցեղասպանության վերաբերյալ այլընտրանքային կարծիքները խստիվ արգելվում էին և՛ մամուլում, և՛ գիտական ու գեղարվեստական գրականության մեջ, այդ թվում՝ պոլսահայ մամուլում: Իսկ քաղաքական կյանքում գերիշխում էին բացառապես պետական տեսակետները՝ ներկայացնելով այսպես կոչված «Թուրքիայի պաշտոնական դիրքորոշումը»: Հայոց ցեղասպանություն եզրույթը ևս վերածվում է տաբուի և մամուլում կիրառվում է կա՛մ չակերտներով, կա՛մ «այսպես կոչված» բառակապակցության ուղեկցությամբ:

Հարկ է նշել, որ ավելի ուշ՝ ԱՍԱԼԱ-ի գործունեության սկզբնական շրջանում ևս ցեղասպանության թեման շարունակում էր տաբու մնալ, սակայն աստիճանաբար սկսում է որոշակիորեն տեղ գրավել թուրքական հասարակական-քաղաքական քննարկումներում, ինչպես Հրանտ Դինքն է նկատել տալիս, քուրդ մտավորականների շնորհիվ, մասնավորապես Իսմայիլ Բեշիքչիի կողմից, ապա Ֆիքրեթ Բաշքայայի, Օսման Այթարի, հետո միայն թուրք այլախոհ մտավորականների կողմից[2]՝ այդպես խախտելով տաբուի հիմքերը:

Այսօր արդեն կարող ենք վստահաբար ասել, որ Հայոց ցեղասպանության թեմայի, ինչպես նաև եզրույթի վրա եղած տաբուն որոշ չափով կոտրվել է Թուրքիայում, և դրանում կարևորագույն դեր ունի այլընտրանքային մամուլը՝ առաջին հերթին «Ակօս» շաբաթաթերթը[3] և, ինչպես նշեցինք, այլախոհ մտավորա-

---

[1] Հայոց ցեղասպանության խնդրին 1965 թ. թուրքական մամուլի արձագանքի մասին մանրամասն տե՛ս Korucu S., Nalci A., *2015'ten 50 Yil Önce…1915'ten 50 Yil Sonra…1965*, İstanbul, Ermeni Kültürü ve Dayanişma Derneği, 2014:

[2] *Հայ դպրն այսօր, 4-րդ խորհրդաժողով*, Թեհրան, 2007, էջ 78-79:

[3] «Ակօս» երկլեզու (հայերեն-թուրքերեն, որը Պոլսի մեջ նմանատիպ առաջին շաբաթաթերթն էր) շաբաթաթերթը հիմնադրվել է 1996 թ. ապրիլի 5-ին Հրանտ Դինքի կողմից, ով էլ մինչև իր մահը (2007թ.) եղել է թերթի գլխավոր խմբագիրը: Հարկ է նշել նաև, որ մեր ուսումնասիրության շրջանակներում այդ ժամանակահատվածի ընտրությունը պատահական չէ, քանի որ այդ տարիներին էին շաբաթաթերթով հիմք դրվել նշված թեմայի զարգացման հիմնական և ամենաբնորոշ միտումները, բարձրացվել թեմային առնչվող հարցադրումները՝ ի ցույց դնելով քննվող հարցի դինամիկան, տաբուի ճեղքումը պոլսահայ մամուլի էջերում:

կանները. «Թուրքիայի պաշտոնական դիրքորոշումից» անջատ՝ հայերի հանդեպ վարած քաղաքականությունը որպես ցեղասպանություն ճանաչող մտավորականները սկսում են հարթակ որոնել բարձրաձայնելու ուղղությամբ: Ահա շաբաթաթերթը հնարավորություն է տալիս ձևավորելու բազմակողմ հարթակ՝ կարծիքների արտահայտման, հայեցակետեր և տեսություններ առաջադրելու համար: Այս ճանապարհով «Ակօս»-ն առողջ բանավեճի ասպարեզ ապահովեց՝ գիտակցելով, որ «առաջին մտահոգութիւնը պէտք է ըլլայ Թուրքիա հաւաքականութեան համար պատմութեան վերաբերեալ ազատ տեղեկութեան հոսք»[4]:

Չափազանցված չի լինի, եթե ասենք, որ «Ակօս»-ի ամենամեծ առաքելությունը հենց այդ տաբուն կոտրելն էր, որը նա արեց հաջողությամբ: Շաբաթաթերթը խնդիր է դնում պետական թեզից տարբերվող տեսակետներին տեղ տալու ծրագրային ուղեգիծը՝ հստակ գիտակցելով, որ դա ընդունելի չի լինելու շատերի համար: Այս մասին թուրք պատմաբան Թաներ Աքչամը գրում է. «Կարգ մը նիւթեր կարգ մը անձերու կողմէ տարբեր ձեւերով կ'ընկալուին կամ կը մեկնաբանուին ու նոյնիսկ տարբեր կը պատմուին կամ կը բացատրուին: Նման նաեւ կարգ մը հարցեր, որոնք Թուրքիոյ մէջ բնաւ չեն պատմուած ու խօսուած: Ասոնք պէտք է պատմուին ու Թուրքիոյ մէջ մարդիկ պէտք է որ անհաճոյ բաներն ալ իմանան ու գիտնան: Շատ ցաւալի պատմութիւններ են պատահածները եւ որու կողմէ կամ ինչ պատճառով ալ կատարուած ըլլայ, պատմութեան ընթացքին գործուած ամէն արարք բացէ ի բաց պէտք է ըսուի»[5]:

«Ակօս»-ը վերլուծության սկզբունք է ընդունում այն, որ թուրք ժողովուրդը չգիտի իրականությունը, ուստի պաշտպանում է այն, ինչ իրեն է հայտնի: Սկսած 1915թ.-ից մինչև օրս՝ թուրքական կրթական համակարգը, մամուլը, պաշտոնական քարոզչամեքենան լծված են հասարակությանն իրականությանը չհամապատասխանող, աղավաղված պատմություն պարտադրելու գործին: Ուստի շաբաթաթերթն իր էջերը տրամադրում է առողջ բանավեճի, հայ և օտարազգի հեղինակների տեսակետների քննարկումների համար՝ որպես սկզբունք ընդունելով «գիտականության բարոյականությունը»[6]: Այս մասին Հրանտ Դինքը նկատել էր տալիս, որ մտավորականներ կան՝ չեն ընդունում Հայոց ցեղասպանությունը, սակայն սկսել են գոնե իրենց «խիղճը գործածել»:

Իրականությունն իր զանազան ոլորտներով մարտահրավեր է ինքնաարտահայտման ձգտող լեզվական գործիքի համար՝ ստանալով քաղաքական շահարկումի աստառ, հետևապես առանցքային պետք է դիտարկվի գիտականության բարոյականության մոտեցումը:

Շաբաթաթերթն այս հարցում առաջադրում է հետևյալ մոտեցումը. «Շատերը այն «կոտորած», շատերը «գենոցիդ», շատերը «տեղահանություն», շատերն էլ «ողբերգություն» են անվանում: Մեր նախնիներն էլ «Անատոլիայի խոսակցակա-

---

[4] Պատմական հանդիպումը, «Ակօս», շաբաթաթերթ, Պոլիս, 8. 04. 2005: Բոլոր մեջբերումները պահպանված են բնագրային ուղղագրությամբ:

[5] Անցեալին հետ առճակատինք, «Ակօս», 29. 04. 2005:

[6] Տե՛ս Յօդուածագիրներէն փունջ մը, «Ակօս», 29. 09. 2000:

նով» «kiyim» (ջարդ) են ասում»[7]: Անկախ այն բանից, թե ինչպես են երկու կողմերը 1915 թիվն անվանում, կարևորն այն է, թե «ուրիշները» ինչպես են անվանում և ճանաչում, քանի որ Հայոց ցեղասպանության խնդիրը, ինչպես նկատել է տալիս Դինքը, ոչ միայն մեր՝ հայերի, այլև ուրիշների հարցը պետք է լինի, քանի որ այն քրեորեն պատժելի հանցանք է համայն մարդկության համար՝ չանտեսելով իհարկե իր ազգային ինքնության բարձրանիշն այս հարցում. «…Թուրքիոյ կողմէ ընդունուիլը կամ չընդունուիլը ոչ թէ հայերուն, այլ ուրիշներուն հարցը պէտք է ըլլայ: Հայերուն ընդունում կամ չքմեղանք որոնելը կամ ալ այս երկերեսութեան դիմաց կացութիւնը մուրացկանութեան աստիճանին հասցնելը մեր նախնիներուն ոսկորները կը կսկծեցնէ… Մեր բուն պարտականութիւնը պէտք է ըլլայ փաստել, որ մեր նախնիները չեն կրնար փճացուիլ, անոնք իրենց թողած մեծ ժառանգութեամբ մեր գոյութեան հետ կ'ապրին»[8]: Բայց այս երբեք չի նշանակեր որ Ցեղասպանութիւնը կը մոռնանք…»: Ապա շարունակում է՝ ընդգծելով, որ ոչ մի հայ ցեղասպանության ենթարկված իր պապերին չի կարող մոռանալ. «Մեր գիտցածին կասկա՞ծ ունինք: Աշխարհ գիտէ այդ բոլորը: Մէջն էր այդ բոլորին…: Ես իմ դատս շալկած պէտք է տանիմ…: 85 տարի սպասեցի: Ինծի համար կարեւորը այն է, որ թուրքը գիտնայ եւ ընդունի այդ բոլորը. ասոր համար ալ, Թուրքիոյ մէջ այս մասին թրքերէն կը գրեմ: Մենք մեր պապերուն կը պարտինք ապագայ մը, որ Հայաստանի ապագան է»[9]:

Ընդհանրապես «Ակօս»-ում հրապարակված նյութերի ուղեգիծը վերապահումով էր մոտենում աշխարհին Հայոց ցեղասպանությունը ճանաչել տալու հայության ջանքերին, ուստի գտնում էր, որ Թուրքիան պետք է այն ճանաչի և հատուցի՝ միայն ժողովրդավար երկիր դառնալով. դա էլ կդառնա հատուցման ճանապարհներից մեկը: Դինքը կարծում էր, որ աշխարհը և հատկապես արևմտյան տերություններն իրենց շահերին են ծառայեցնում Հայոց ցեղասպանության խնդիրը՝ առաջնորդվելով «նապաստակին՝ փախի՛ր, բարակին՝ բռնէ՛» ռազմավարությամբ[10]:

1998 թ. Ֆրանսիայի Ազգային ժողովը հանդես եկավ Հայոց ցեղասպանության ճանաչման օրինագծով: 2000 թ. այն դարձավ Ֆրանսիայի Սենատի օրինագիծ, իսկ 2001 թ.՝ օրենք: Դրանից հետո օրակարգ մտավ Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնելու խնդիրը, ինչին Դինքը կտրուկ դեմ էր: Նա գտնում էր, որ Թուրքիային ժողովրդավարական արժեքներ պարտադրելու փոխարեն Ֆրանսիան յուրացնում է նրա սխալ օրենքները: Հայության համար որոշակիորեն անընդունելի և անհասկանալի մնաց Դինքի այն սկանդալային պնդումը, թե եթե Ֆրանսիայում Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացվի, ապա ինքը կլինի առաջիններից, ով կգնա Ֆրանսիա և կփորձի խախտել այն, և Թուրքիան ու Ֆրանսիան թող մրցակցեն միմյանց հետ, թե ով է առաջինն իրեն բանտ նետելու[11]: Լրագրողի

---

7 Dink H., «Neye Karşi Çikiyoruz?», Agos, 3. 11. 2000. Այս մասին առավել մանրամասն տե՛ս նաև Շաբթուան հրատապ յօդուածը, «Ակօս», 12. 06. 1998:

8 Վասն խաղաղութեան, «Ակօս», 5. 09. 2003:

9 «Վայ այն ոտքերուն, որոնց տակ ճանապարհ չկայ», «Ակօս», 6. 09. 2002:

10 Տե՛ս Ակօս շաբաթաթերթին առաքելութիւնը, «Ակօս», 14. 04. 2000:

11 Օրինագիծը անցաւ, «Ակօս», 6. 10. 2000:

այս մոտեցումն առավելապես հենված էր թուրքական իրականության ճանաչման, ինչպես նաև իր որդեգրած ձախակողմյան գաղափարախոսության որոշակի սկզբունքների վրա: Նա իր այդ մոտեցումը բացատրում էր նրանով, որ աշխարհի խորհրդարանների որոշումներից ու վճիռներից ավելի կարևոր է, որպեսզի թուրք ժողովուրդը գիտակցի իրականությունը և կարողանա գտնել այն հարցի պատասխանը, թե «ի՞նչ կիքսեն այս Հայերը, ինչո՞ւ շարունակ կը պնդեն ցեղասպանութիւն կատարուած ըլլալուն մասին, ի՞նչ առնելիք-տալիք ունին այս մարդիկը թուրքերուն հետ»[12]: Ապա ընդգծում է, որ անգամ Եվրոպան որոշ զգայուն հարցերում չի կարողանում պայքարել ժողովրդավարության հիմնական սկզբունքների՝ մտքի և խոսքի ազատության համար: Այդ օրենքով, ինչպես նկատել է տալիս Դինքը, մարդկանց դատապարտելու փոխարեն այն պետք է ծառայեցնեն սեփական ժողովրդին ցեղասպանության երևույթը բացատրելու և հետևանքները «բուժելու» համար: Այն հասարակություններում, որտեղ տեղեկացված լինելու իրավունքը բավականաչափ չի օգտագործվում, մարդիկ խոսում են իրենց իրազեկվածության չափով, իսկ եթե պաշտպանում են այն, ապա դա ինչպե՞ս կարող է հանցանք համարվել: Իսկ երբ դա վերածվի հանցանքի, մի՞թե այդ *անձնավորությանը միացրած չեն լինի ցեղասպանության ճանաչման պայքարին* (ընդգծումը մերն է - Է. Մ.): Եթե մարդ գործում է իրազեկվածության իր չափով, ապա, ինչպես իրավացիորեն շարունակում է հեղինակը, այդ ընդունած օրենքն ինչպիսի՞ փոփոխություն կարող է մտցնել այդ անձնավորության հայացքներում[13]:

Շաբաթաթերթն իր առաջադրած նյութերով նաև պաշտպանում էր այն վիճելի տեսակետը, թե Թուրքիան պետք է Հայոց ցեղասպանության խնդիրը դուրս բերի արևմտյան տերությունների քաղաքական գործիքների շարքից: «Ես գիտեմ իմ իրականութիւնը, գիտեմ՝ շալկել եմ պապերուս գլուխէն անցած այդ ցաւը եւ չեմ հաւատար ո՛չ Ֆրանսիայի, ո՛չ Գերմանիոյ, ո՛չ միւսին, որ Ցեղասպանութեան ճանաչման հարցը նոյն ատեն չեն գործածեր, չեն շահագործեր իրենց քաղաքականութեան Թուրքիոյ հետ ունեցած մարզին մէջ»[14], - գրում է Դինքը: Երբ 2005 թ. Գերմանիայի խորհրդարանում բարձրացվեց Հայոց ցեղասպանության հարցը, Դինքը բոլոր հայերին կոչ արեց. «Սթափվե՛ք, Մերկելը սա ձեզ համար չի անում»[15]: Ապա անդրադառնալով Թուրքիային՝ ասաց. «Մերկելի ցավն այլ է՝ ինչպիսի խաղաթուղթ օգտագործել Թուրքիայի՝ Եվրամիությանն անդամակցելու դեմ»: Ըստ Դինքի՝ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելն ասում է. «Այո՛, գիտեմ, որ ցեղասպանության հարցը Թուրքիայում ազգայնականների համար շատ նուրբ թեմա է: Թուրքիան այս հարցում, եթե անհրաժեշտ լինի, անգամ Եվրամիությանը կմերժի. այդ նկատառումով էլ այստեղ դնեմ այդ հարցը»[16]: Ուստի հենց Թուրքիայի խորհրդարանում թուրք պատգամավորներին կոչ էր անում Մերկելին այդպիսի ուժ չտալ:

---

12 «Ֆրանսայի ճարպիկութիւնը», «Ակօս», 9. 02. 2001:

13 Տե՛ս Դինք Հ., *Երկու մոտ ժողովուրդ, երկու հեռու հարևան*, Երևան, 2007, էջ 106:

14 *Հայ դպրն այսօր, 4-րդ խորհրդաժողով...*, էջ 83-84:

15 Նույն տեղում:

16 Դինք Հ., *նշվ. աշխ.*, էջ 158:

Հաճախ է անդրադարձ արվում նաև ԱՄՆ-ի նախագահի ամենամյա ապրիլքսանչորսյան ուղերձին և Genocide իրավական եզրի կիրառմանը: Այս մոտեցմամբ այն նկատել է տալիս, որ աշխարհը, հատկապես գերտերություններն արմատախիլ արված ու բնաջնջված ժողովրդի ցավը դարձրել են խաղաքարտ. ելնելով իրենց շահերից՝ մե՛կ Թուրքիայի դեմ են օգտագործում, մե՛կ Հայաստանի. «Ես պատմական ողբերգութիւն մը ապրեր եմ, որուն ճակատագիրը այսօր կը գտնուի Միացեալ Նահանգներու Նախագահին երկու շրջթներուն միջեւ, անոր երկրին ազգային շահերուն կապուած ըլլալով»[17]:

Թուրքիայում Հայոց ցեղասպանության թեմատիկայի շրջանակներում է գտնվում կեղծիքի վրա հիմնված և ցեղասպանության փաստը հերքող քարոզչությունը, որը տարածված է նաև դպրոցական և բուհական դասագրքերում: Հեռուստատեսությամբ ցուցադրվում են հակահայկական բնույթի քարոզչական փաստագրական ֆիլմեր ու հաղորդումներ, անգամ տարրական ու միջնակարգ կրթական հաստատություններում հանձնարարվում են Հայոց ցեղասպանության փաստը հերքող շարադրություններ, կազմակերպվում են ազգամիջյան թշնամանք հրահրող աշակերտական միջոցառումներ: Նման քարոզչական դրսևորումները, սակայն, չեն վրիպում Եվրոպայի աչքից. եվրոպական 160-ից ավելի քաղաքական, իրավաբանական, կրթական կազմակերպությունների համատեղ ջանքերով ստեղծվում է «Թուրքական վարժարանների մեջ ուրացման քաղաքականության դեմ եվրոպական կոալիցիա»[18]: Այդ կառույցը հանդես եկավ Թուրքիայի խիստ քննադատությամբ և կոչ արեց զրկել նրան տարեկան միլիոնավոր եվրոների կրթական օժանդակությունից: «Ակօս»-ում տեղ գտավ նաև Եվրոպայի հայկական ֆեդերացիայի նախագահ Հիլդա Զոբոյանի՝ Եվրոպական խորհրդարանի հանձնաժողովի խորհրդի վարիչներին ուղղված կոչը, որտեղ նա գրում է. «Ինչպէս որ նիւթապէս չի քաջալերուի Հրէական ցեղասպանութեան ուրացումը կամ ալ հարաւային Ափրիկէի «ափարթհայտ»-ի (ցեղապաշտական քաղաքականութեան) պաշտպանութիւնը, այնպէս ալ որքան ատեն որ Եւրոպայի կողմէ որդեգրուած սկզբունքներուն դէմ գործող արժեքները կը շարունակէ տարածել, թուրք կրթական ու դաստիարակչական դրութիւնն ալ պէտք չէ տնտեսապէս մատակարարուի Եւրոպայի տնտեսական միջոցներով»[19]:

Թուրքական հակահայկական և իր բնույթով հակագիտական քարոզչությունը, սակայն, ավելի լայն հոսքով շարունակվեց նաև «գիտական» ասպարեզում: Այդ հարցում հատկապես ակտիվ էին «Թուրքական պատմագիտական ընկերությունը» և վերջինիս նախկին նախագահ պատմակեղծարար Յուսուֆ Հալաչօղլուն: Նրա՝ կեղծիքներով հարուստ գրքի շուրջ մամուլում հեռակա բանավեճ է սկսվում Հալաչօղլուի և Հրանտ Դինքի միջև: Հալաչօղլուն անգամ բողոքի նամակ է հղում «Ակօս»-ի խմբագրատուն, որում պատմում է իր «հետազոտությունների» մասին և նշում. «Անշուշտ, դուք ալ կ'ուզէք, որ օտար վաւերագրերու լոյսին տակ իրողու-

---

17 «Ֆրանսայի ճարպիկութիւնը», «Ակօս», 9. 02. 2001:

18 Տե՛ս Եւրոպայէն՝ ազդարարութիւն, «Ակօս», 1. 08. 2003:

19 Նույն տեղում:

թիւնը մէջտեղ դրուի: Երկու հաւաքականութիւններու միջեւ այդ թուականներուն բախում մը պատահած է անկախ հայկական պետութիւն մը հիմնելու համար: Այդ պատճառաւ ալ մեռնող Հայեր եղած են: Ես ներողամտութեամբ կը դիմաւորեմ ձեր հեգնական հակազդեցութիւնը: Որովհետեւ, մինչեւ այսօր միմիայն Հայերու սպանութիւնը լսելով մեծցանք: Բայց ասոր փոխարէն՝ Հայկական կազմակերպութիւններու ըրածներուն մասին բնաւ չխօսուեցաւ»[20]: Հալաչօղլուից հետո թուրք ուսումնասիրող Մուրադ Բարդաքչրի աշխատասիրությամբ հրատարակվում է Թալեաթ փաշայի օրագիրը, որում փաստեր կային հայերի տեղահանության և ոչնչացման վերաբերյալ: Թուրքական քարոզչամեքենան սկզբում այս գիրքը փորձում է օգտագործել ի շահ իրեն, սակայն հետագայում պարզ է դառնում, որ օրագրում առկա որոշակի փաստեր այնքան էլ ձեռնտու չեն պետական թեզին: Թուրքական իշխանությունների և քարոզչամեքենայի այս վայրիվերումները դառնում են «Ակօս»-ում քննարկման նյութ, որտեղ էլ բավական հետաքրքիր շեշտադրումներով բացահայտվում է կեղծիքի վրա հիմնված քարոզչության սնանկությունը[21]:

«Ակօս»-ում սկսվում է Հայոց ցեղասպանության հետ կապված մեկ այլ թեմատիկ բանավեճ, որը, սակայն, կրկին խնդրահարույց է, և որի գիտականությունը լուրջ կասկածների տեղիք է տալիս: Խոսքը Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Մուսթաֆա Քեմալ Աթաթյուրքի կողմից Հայոց ցեղասպանության խնդրին տրված գնահատականին է վերաբերում: Որոշ թուրք պատմաբաններ փորձում են արդարացնել Մուսթաֆա Քեմալին և նրան ներկայացնել որպես այլ կողմնորոշում ունեցող գործիչ, սակայն օբյեկտիվ փաստերը ցույց են տալիս, որ նա եղել է նույն երիտթուրքական մոտեցման կրող և շարունակել է հայերի դեմ ցեղասպանական քաղաքականությունը: Այնուհանդերձ, հիշյալ թեմայով սկսված քննարկումները շաբաթաթերթի էջերում որոշակի դրական նշանակություն ունեին, քանի որ արծարծվում էր Հայոց ցեղասպանության խնդիրը:

Այս թեման առավելապես տեղ է գտնում Թաներ Աքչամի հոդվածներում: Այսպես, Աքչամը գրում է. «Եթէ Աթաթիւրք այսօր ապրելու ըլլար, 1915 թ. պատահածները չէր պաշտպաներ: Պետութիւնը եթէ ցոյց տալու ըլլար Մուսթաֆա Քէմալի 1919-1920-ի շրջանին քաղաքացիական արիութիւնը, այսօր իր գտնուած տեղէն շատ աւելի տարբեր տեղ մը կը գտնուէր»[22]: Մուսթաֆա Քեմալը, ըստ Աքչամի, 1920 թ. ապրիլի 24-ին Ազգային մեծ ժողովում իր ելույթում իբրև ասել է, որ անցյալում հայերի հետ պատահածը շատ ծանր դեպք է: Ապա ռադիոհաղորդումներից մեկում նշել է. «Երաշխիք կու տամ որ անգամ մըն ալ Հայոց սպաննութեան նման չարիք մը պիտի չպատահի»[23]: Իհարկե, նման հայտարարություններ եթե նույնիսկ եղել են, ապա ուղղված էին արտասահմանյան լսարանին և նպատակ են ունեցել ի ցույց դնելու Թուրքիայի՝ իբրև թե «փոխվող նկարագիրը»:

---

[20] Տինք Հ., Կիպրոսը ո՞ւր, Ղարաբաղը ո՞ւր, «Ակօս», 20. 02. 2004:

[21] Տե՛ս Հաշիւները տակնուվրայ…, «Ակօս», 29. 04. 2005:

[22] Նույն տեղում:

[23] Տե՛ս Աթաթիւրք կը գոչէր. «Ոճրագործներ», «Ակօս», 29. 04. 2005: Տե՛ս նաև Հասան Ամջա, *Տեղահանություն և ոչնչացում*, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան, 2007:

Շարունակելով այս թեման՝ Աքչամը նշում է, որ Թուրքիայում «ցեղասպանություն» եզրույթն առաջին անգամ գործածել է Աթաթյուրքի ընկեր Ֆալիհ Ռըֆքը Աթայը: Նա 1968 թ. «Դյունյա» թերթում տպագրել է. «Ասիկա ցեղասպանութիւն մըն է» վերնագրով հոդվածը, որտեղ պատմել է Աթաթյուրքի հետ կապված իր հուշերը. «Աթաթիւրք, 1915 թ. Հալէպի մէջ Օթել Պարոնը մնալով, հոն կը տեսնէ Հայերու բնակեցման գործերով զբաղուող Չերքէզ Հասան Ամճան: Աթաթիւրք երբ զայն կը տեսնէ, շատ կը բարկանայ եւ կը գոչէ. - «Ոճրագործնե՛ր, բոլորդ ալ ճակատի ետեւի շարքերուն մէջ Հայ սպաննելու համար շրջագայող ոճրագործներ էք: Ձեզմէ ո՞չ մէկը ճակատ գալով կը պատերազմի»: Բայց յետագային ներման կ՚արժանանայ, որովհետեւ Հայերու տեղադրման գործը լրջօրէն կատարած ըլլալուն պատճառաւ Հասան Ամճան ալ պաշտօնազուրկ եղած է»[24]:

Հայոց ցեղասպանության հետ ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվող թեմաների շարքում ավելորդ չէ առանձնացնել մեկ դրվագ ևս: Թուրքական իշխանությունները ժամանակ առ ժամանակ կազմակերպում էին հայ-թուրքական հարաբերություններին նվիրված միջոցառումներ, որոնք մեծ մասամբ ունեին իմիտացիոն բնույթ և միտված էին երկխոսության տպավորություն ստեղծելուն: Նմանատիպ մի հանդիպման ժամանակ, որը տեղի ունեցավ 2005 թ. ապրիլի 5-ին և վերնագրված էր՝ «Հայ-թուրքական հարաբերությունները պատմական գործընթացում», հրավիրված էին հայ համայնքը «ներկայացնող» երեք մասնակից՝ Հրանտ Դինքը, լրագրող և հրապարակախոս Էթիեն Մահչուփյանը և «պոլսահայ» իշխանամետ ու «թուրք ազգայնամոլ» գրող Լևոն Փանոս Դաբաղյանը: Մասնակիցներից իրականում միայն Դինքն էր ներկայացնում հայ համայնքը, քանի որ մյուս երկուսը կապ չունեին համայնքի հետ[25] և պարզապես ծագումով էին հայ: Այդ սեմինարքննարկման ժամանակ Դինքը մի հետաքրքիր հարց է առաջ քաշել՝ հայտարարելով. «Դուք հուշարձաններ եք կառուցում, արարողություններ կատարում, իսկ ես, կորցրած լինելով իմ նախնիներին, չեմ կարողանում հիշատակել ապրիլի 24-ը»[26]: Այս խոսքերը լուրջ հակազդեցության տեղիք տվեցին, իսկ «Արդարություն և զարգացում» կուսակցության պատգամավոր Ինջի Օզդեմիրը, հարձակվելով Դինքի վրա, ասաց. «Էլ ինչպես էիք հիշատակելու, աշխարհում ամենուրեք հուշարձաններ եք կառուցել»[27]: Սակայն դրանից հետո էլ Դինքը չի դադարել իր և իր նման մտածողների հետ պատմական փաստարկումներ է առաջ մղել շաբաթաթերթում:

---

[24] Նույն տեղում:

[25] Էթիեն Մահչուփյանն ինքը բազմիցս հայտարարել է, թե «դասական» իմաստով հայ համայնքի անդամ չէ և իրավասու չէ ներկայացնելու հայ համայնքը (տե՛ս, օրինակ՝ Mahçupyan, Benim Ermeni cemaatini temsil etme gibi bir yetkim yok, http://www.ermenihaber.am/tr/news/2014/10/29/Mah%C3%A7upyan-Benim-Ermeni-cemaatini-temsil-etme-gibi-bir-yetkim-yok/14100): Իսկ Լևոն Փանոս Դաբաղյանը հայ համայնքում անվերապահորեն ընկալվում է որպես դավաճան, դուրս է համայնքային ցանկացած զարգացումներից, ուստի ոչ մի կերպ հնարավոր չէ նրան համարել հայ համայնքի ներկայացուցիչ:

[26] Չաքրյան Հ., Ցեղասպանության հարցի քննարկումներ Մեջլիսում՝ մասնակցությամբ թուրքահայ գործիչների, «Ազգ» օրաթերթ, Երևան, 7. 04. 2005:

[27] Նույն տեղում:

Այսպիսով, «Ակօս»-ում 1996-2007 թթ. սկիզբ առած գործընթացը մի կողմից նպաստեց Թուրքիայում Հայոց ցեղասպանության թեմայի արծարծմանը և դրա ու ցեղասպանություն եզրույթի կիրառման հետագա աստիճանական զարգացմանը, մյուս կողմից լուրջ ազդակ հանդիսացավ «թուրքական տաբուների» վերանայման համար: Չնայած շաբաթաթերթում Հայոց ցեղասպանությանն առնչվող հոդվածները երբեմն ոչ ամբողջությամբ էին արտացոլում հայ ժողովրդի իրական շահերը և նպատակները, երբեմն կրում էին թուրքական քարոզչության որոշակի տարրեր (հատկապես որոշ թուրք հեղինակների հոդվածներում), սակայն, այնուամենայնիվ, խաղացին լրջագույն դեր թեմայի զարգացման գործում: Կարևոր է շեշտել, որ Հայոց ցեղասպանության թեման ավելի մեծ ծավալներ ստացավ թուրքական մամուլում և «Ակօս»-ում հատկապես Հրանտ Դինքի սպանությունից հետո, ինչը շատերի մոտ ասոցացվեց որպես ցեղասպանության շարունակություն: Միևնույն ժամանակ փաստերը և որոշակի «Ակօս»-ում տպագրված այդ թեմատիկայով հոդվածների ուսումնասիրությունը միանշանակ թույլ է տալիս պնդել, որ հենց Դինքի խմբագրապետության տարիներին արված քայլերը և ընդունված սկզբունքները հիմք հանդիսացան Հայոց ցեղասպանության թեմայի հետագա ծավալմանը թուրքական և թուրքահայ մամուլում:

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ «ԱԿՕՍ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԷՋԵՐՈՒՄ ՀՐԱՆՏ ԴԻՆՔԻ ԽՄԲԱԳՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1996-2007 ԹԹ.)

*Էլինա Միրզոյան*

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածի շրջանակներում ամփոփված նյութը նկատել է տալիս այն, որ թուրքական մամուլի, Թուրքիայի հասարակական-քաղաքական և գիտավերլուծական շրջանակների օրակարգերում նշված տարիներին Հայոց ցեղասպանության թեմայի մուտքը և զարգացումը մեծապես կապված են «Ակօս»-ում հրատարակվող ոչ միայն հայ, այլև այլազգի հեղինակների հոդվածների հետ:

Հրանտ Դինքի և նրա ձախակողմյան շրջապատի հայացքները մեծապես հիմնված էին թուրքական իրականության վրա և նպատակ ունեին ոչ այնքան խոսելու հարցի խորքային էությունից, որքան հնարավորություն ստեղծելու Թուրքիայում այդ հարցի քննարկման համար ընդհանրապես:

«Ակօս»–ում հանդես եկող թուրք և այլազգի որոշ հոդվածագիրներ ակնհայտորեն կամ քողարկված «պաշտոնական մտավորականության» շարքերից էին, ուստի նպատակ ունեին առաջ տանելու թուրքական իշխանությունների տեսակետները՝ դրանք քողարկելով երբեմն «հայամետ» դրսևորումներով:

**Բանալի բառեր՝** տաբու, մարտահրավեր, այլընտրանքային մամուլ, Հայոց ցեղասպանություն, ճանաչում, հատուցում, ժողովրդավարություն:

## ARMENIAN GENOCIDE THEME IN "AGOS" WEEKLY DURING HRANT DINK'S EDITORSHIP (1996 -2007)

*Elina Mirzoyan*

SUMMARY

The article demonstrates that the appearance of the Armenian Genocide topic on the agenda of the Turkish press and Turkey's sociopolitical and scientific-analytical circles, as well as its further development is greatly connected with "Agos", and mainly with the publications of Armenian and foreign authors' in the weekly. However, part of the publications on the Armenian Genocide was unacceptable for the Armenians. However, the views of Hrant Dink (mainly left handed) were based on the Turkish reality and intended not so much to speak on the deep essence of the issue, but create opportunities in Turkey for the furtherance of discussion of the matter. On the other hand, some Turkish and foreign authors were overtly or covertly from the ranks of the "official intelligentsia", therefore they pursued the aim of advancing the Turkish official viewpoint, sometimes hiding it under "Armenophil" manifestations.

**Keywords**: taboo, challenge, alternative press, Armenian Genocide, recognition, compensation, democracy.

## ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ТЕМЫ ГЕНОЦИДА АРМЯН НА СТРАНИЦАХ ГАЗЕТЫ «АКОС» В ГОДЫ РЕДАКТОРСТВА ГРАНТА ДИНКА (1996 – 2007 ГГ.)

*Элина Мирзоян*

РЕЗЮМЕ

Изложенный в статье материал позволяет заметить, что в указанные годы включение темы Геноцида армян в повестку дня турецкой прессы и общественно-политических, научно-аналитических кругов Турции, а также дальнейшее развитие этой темы были главным образом связаны с газетой «Акос» и опубликованными в ней статьями армянских и иностранных авторов.

Взгляды Гранта Динка и его окружения, придерживающегося левых политических взглядов, были основаны главным образом на турецкой реальности и имели целью не столько освещение глубинной сути вопроса, сколько создание в Турции возможности для обсуждения этого вопроса вообще.

Некоторые турецкие и иностранные авторы статей явно или скрыто состояли в рядах «официальной интеллигенции» и преследовали цель продвигать точки зрения турецких властей, порой скрывая это за «армянофильскими» проявлениями.

**Ключевые слова:** табу, вызов, альтернативная пресса, Геноцид армян, признание, компенсация, демократия.